ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, հեռ. +37410 570-590, էլ. փոստ info@armradio.am

ք. Երևան
«14» հոկտեմբերի 2025 թ.

«Աքսել» ՍՊԸ-ի
տնօրեն Արշակ Ղուկասյանին
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Թումանյան 8
ՀՎՀՀ՝ 02918838
Էլ. հասցե՝ am.llc24@mail.ru

Հարգելի՛ պարոն Ղուկասյան

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Գնորդ) և «Աքսել» ՍՊ ընկերության միջև (այսուհետ՝ Վաճառող) 21.05.2025 թվականին կնքվել է «ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով Վաճառողը պարտավորվում է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնահատման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք) իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Ըստ պայմանագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող N 2 հավելվածի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է նշվել պայմանագրի կնքման օրվանից մինչև 40 օրացուցային օր:

30.06.2025թ. կնքվել է «ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-1» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), համաձայն որի երկարաձգվել է Պայմանագրով սահմանված 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով՝ մինչև 30.07.2025թ.:

Ըստ Պայմանագրի 2.4 կետի

Վաճառողը պարտավոր է՝

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Պայմանագրի 6.1-րդ կետի համաձայն Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

Պայմանագրի 2-րդ չափաբաժնի ապրանքի մատակարարման ժամետը ավարտվել է 30.07.2025 թվականին:

Ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով, որ «Աքսել» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ մասնավորապես խախտել է ապրանքի մատակարարման ժամկետը, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանի (մասնակի միայն 2-րդ չափաբաժնի մասով) լուծում է «ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-1» ծածկագրով Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ Վաճառողի նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն «Աքսել» ՍՊ ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու նպատակով:

Տեղեկացնում ենք նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում Վաճառողի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները և 2-րդ մասի պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՔՈԼՈՅԱՆ